

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՋՈՂԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ՝ ՀԱՅՈՒՄ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՇՈՒՐՁ


Երկուշաբթի 23 Ապրիլ 2007-ի գիշերը, Պիքֆայայի Ա. Աստուածածին վանքը ողողուեցաւ հայ երիտասարդութեամբ: Նախագահութեամբ Լիբանանի Հայոց Առաջնորդ Գեորգ Տ. Գեղամ Եպս. Խաչերեանի, եւ կազմակերպութեամբ 92-Ամեակի կեդրոնական մարմնին, Լիբանանահայ բոլոր միութեանց, քաղաքական կազմակերպութեանց, մարմնակրթական ակումբներու եւ երիտասարդական շարժումներու մեծաթիւ անդամները հաւաքուած էին Պիքֆայայի Նահատակաց Յուշարձանին շուրջ, իրենց յարգանքը ընծայելու մեր մէկուկէ միլիոն նահատակներուն:

ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ, ՈՒ ԴԵՈՇԱՏԱՆԱՆՔ

տակներուն կտակին ու պատգամին: Ժամկոչեան նշեց, որ հայութիւնը Ապրիլ 24ներու պէտք չէ սպասէ, որպէսզի իր դատը պաշտպանէ, իր նահատակներուն յիշատակը ոգեկոչէ, այլ հայուն ամենօրեայ աշխատանքը պէտք է ըլլայ պահանջատիրական պայքար մղելը, ազգային արժէքներուն կառչած մնալը, նահատակներուն կտակով առաջնորդուիլն ու թուրքէն հաշի պահանջելը:

Օրուան պատգամը փոխանցեց Բենիամին Պչաքճեան, որ ըսաւ, թէ Ապրիլեան նահատակներուն յիշատակին նուիրուած հանդիսութիւններ ոչ միայն կու գան ոգեկոչելու անոնց յիշատակը, այլեւ անլոյծ կը մնայ եւ տակաւին պահանջատիրական երթը կը շարունակուի:

Յայտնենք, որ նախքան հսկումը Անթիլիասէն Պիքֆայայ տեղի ունեցաւ քայլարշաւ՝ մասնակցութեամբ Դ. Յ. Դ. ԼԵՄԻ բոլոր մասնաճիւղերուն:



ԱՐԾԻՒՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Հայրիկը եղար դու հայ ազգին, Անիի սքանչելի մայր տաճարի պատկերը. Պարթեւ հասակով ու լայնաթիկունք՝ Տէր կանգնեցար հայոց բարբերուն:

Վսեմափայլ եղար դուն, Աստուածային շունչը տուիր մեզի: Միգապանծ արքայի մը նման, Տէր կանգնեցար դուն հայ ազգին:

Փառահեղ դիմագիծով մը անհուն, Ծերունագարր կաթողիկոսը մեր Եթերային փառքերով օժտուած, դարձար մեծ եւ պարզեւատեր:

Սան Սթեֆանոյէն մինչեւ Պերլին, Պայքարեցար յանուն երկաթ շերտիին: Գոչեցիր «Ոտքի», հայ ժողովուրդ, ժամն օրհասական է, պայքարը սրբազան»:

Բալիկ Խըտըրլարեան

ՀԵՅՈՒՄ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՂՔԱՏԱՆՆԱՍ ԱՆՇԱՏԱՆՔՈՎ ՀՈՂԱԼ ԿԱՐԻՔԱԿՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Անցնող քանի մը ամիսներէն սկսեալ, Հայ Համալսարանական Ուսանողներու Միութեան անդամները, իրենց դասախօսական ու ընկերային ծրագիրներուն առընթեր, իրենց դաստիարակիչ ձեռնարկներ, նուիրուեցան, հետեւողական այցելութիւններով, նպաստներ յատկացնել կարիքաւոր ընտանիքներու: Սոյն աշխատանքը ՀԵՅՈՒՄ-ականներ սկսան Ե.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի հայրական տնօրինումով:

Երիտասարդ ուսանողութեան տոյն աշխատանքը կ'ընդգրկէ ծանօթացում, օժանդակութիւն եւ քաջալերանք այն ընտանիքներուն, որոնք երկրի տնտեսական տագնապին հետեւանքով կամ այլապէս չբաւորութեամբ կը տառապին: Սնունդի ու հագուստի ընդհատումը նպաստը գլխաւոր օժանդակութիւններն է հայ ընտանիքներուն, յատկապէս ներկայ օրերուն:

Աղքատախնամ տոյն առաքելութիւնը, բոլոր ժամանակներու մարդոց համար հոգեկրօնք ըլլալով հանդերձ, հայ համալսարանական ուսանողութեան համար առաւել եւս դաստիարակիչ նախաձեռնութիւն է, զանոնք պատրաստելով կեանքի դժուարութեանց ու անակնկալ մարտահրաւերներուն: Միաժամանակ ուրիշին ցաւը բաժնելու բացառիկ պատեհութիւն է այս, որուն ճամբով ՀԵՅՈՒՄ-ականներու ազգային պատկանելիութիւնը առաւել եւս շեշտուեցաւ:

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Աստղիկ Ճամպուլեան
Բալիկ Խըտըրլարեան
Գարլա Խիժոյեան
Հրայր Ճամպուլեան
Յարութ Գանտահարեան
Նաթալի Պաղչեճեան
Սարո Քէնտիրճեան



Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն - Armenian Church University Students' Association

Նոր շրջան Ա. Տարի, քիւ 3 (3)

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Յարափոփոխ աշխարհին մէջ երիտասարդութեան դերին անդրադառնալով, ինչքան աւելի պատասխանատուութեան դիմաց կը գտնենք մենք մեզ:

Կեանքը իր մարտահրաւերներով մարդկութիւնը դրած է նոր իրականութեան ու իրավիճակի մէջ: Այս թոհուրոհին մէջ կրօները, իրենց հաւաքականութեան հոգեւոր ապրումներուն արտայայտիչը, մարդկային կեանքին ու ընկերութեան որակին նոր չափանիշ տալու կոչուած են:

Երիտասարդութիւնը եւս պէտք է ունենայ իր կարելոր ներդրումը այս գծով: Երիտասարդութիւնը անմասն չէ, ոչ ալ ընկերութեան լուսանցքին վրայ գտնուող հաւաքականութիւն մը: Առանց երիտասարդութեան ներուժին, մութ է որեւէ ժողովուրդի ապագան: Երիտասարդութիւնը յոյսն է, ու լոյս սփռողը ապագային:

Կեանքի մարտահրաւերներուն դիմաց անվախ երիտասարդութիւնն է միայն որ կը հասնի իր նպատակին:

Որպէս Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն կապուած կը մնանք մեր եկեղեցւոյ սրբազան սկզբունքներուն, անվախ՝ կեանքի մարտահրաւերներէն, ու կը նայինք միշտ յառաջ՝ մեր եկեղեցւոյ, ազգին եւ հայրենիքին պայծառ ապագային:

ՈՒՄՏԻ ՕՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ

Անթիլիասի Ուխտի Օրուան առիթով, ամէն տարի Ա. Գրիգոր Լուսաւորչի «Մուտն ի Վիրապի» տօնին տեղի ունեցող եկեղեցական հոգեպարար արարողութիւնները, եւ Ս. Աջին գլխաւորութեամբ կազմուող մեծահանդէս թափօրը, այս տարի իւրայատուկ նշանակութիւն եւ պատմական հանգամանք ստացաւ մեր ժողովուրդի կեանքէն մերս:

Կիրակի, 25 Մարտ 2007-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ հաւաքուած բազմութիւնը հոգեկան մեծ գոհունակութիւն ապրեցաւ, երբ Ե.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով, Մայր Տաճարին մէջ հանդիսատարապէս գետեղեցաւ Ա. Գրիգոր Լուսաւորչի մասունքը:

Արամ Ա. Կաթողիկոս իր Հայրապետական պատգամով նախ անդրադարձաւ Հայ ժողովուրդի Մեծագոյն Սուրբին կեանքին ու զոհաբերութեան, ապա մեր ժողովուրդի մեծ դարձին, ու զայն բնորոշեց իրենց Հոգեւոր Յեղափոխութիւն: Իր պատգամի ավարտին Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Մայր Տաճարէն մերս Ա. Գրիգոր Լուսաւորչի մասունքի գետեղման, Ս. Երրորդութեան խորանին մէջ կառուցուած վիմակերտ Սրբատուփի օժանդակ միջոցով, ի մխիթարութիւն հաւատացեալներուն:

Պատարագէն անմիջապէս ետք, Միաբան Հայրերէ, Քահանայից դասէն ու Դպրեվանքի սաներէն կազմուած մեծահանդէս թափօրը, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, Ս. Աթոռի բազմաթիւ սրբազան մասունքներով,

Մայրավանքին ամբողջ շրջանը կատարեց: Ապա, երբ դարձեալ մուտք գործեց Մայր Տաճար, Վեհափառ Հայրապետը ու հոգեւորականաց դասը բարձրացաւ Ս. Երրորդութեան Խորանը, ուր կանգնած յատուկ վիմակերտ սրբատուփի մէջ Վեհափառ Հայրապետին ձեռնաքննեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքը, որ ցարդ կը գտնուէր Կաթողիկոսարանի Գանձատան մէջ: Մասնատուփի օժանդակ հանդիսատար արարողութեան ընթացքին, նախ ջուրով ու զինով լուացուեցաւ քարը, եւ ապա Վեհափառ Հայրապետին կողմէ Սրբալոյս Միւռնով օծուեցաւ:

Օժանդակ արարողութեան եւ մասունքի գետեղումէն անմիջապէս ետք, հոգեւորականաց դասը Վեհափառ Հայրապետը առաջնորդեց դէպի Մայր Խորան, ուր տեղի ունեցաւ քրօնիճեքի հանդիսատար արարողութիւնը «Աջովն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»: Ս. Լուսաւորչի

Աջով, իսկ Միաբան հայրեր այլ սուրբերու Աջերով, ու մասունքներ պարունակող խաչերով օրհնութիւն բաշխեցին հաւատացեալներուն:

Հրօնիճեքէն յետոյ, Ս. Լուսաւորչի Աջը դրուեցաւ Մայր Խորանի բեմին վրայ Միաբան Հայրերու հսկողութեան ներքեւ, ու հայ թէ օտար հաւատացեալներ մինչեւ ուշ գիշեր եկան Մայրավանք համբուրելու համար զայն: Աջահամբոյրէն ետք, բոլոր հաւատացեալները հերթաբար ուղղուեցան նաեւ Ս. Երրորդութեան Խորան, այնտեղ եւս ծնրադրելու Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքին առջեւ, սրբավայրին մէջ ծնկաչոք իրենց աղօթքը բարձրացնելու առ Աստուած:



Designed by Harout Kandaharian

